**Արձանագրություն N 3**

«ՌԱԿ-ՊԸԱՇՁԲ-2016/3» ծածկագրով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» «Մայիսի» 2016թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

**Հանձնաժողովի նախագահ**

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա.Ռոստոմյան

**Հանձնաժողովի անդամներ**

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ.Մնացականյան

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ՝ Ն.Թովմասյան

ՀՀ ԱՆ <<Առողջապահական ԾԻԳ>> ՊՀ-ի շինարար, շրջակա միջավայրի անվտանգության մասնագետ՝ Ս.Սմբաթյան

ՀՀ ԱՆ <<Առողջապահական ԾԻԳ>> ՊՀ գնումների մասնագետ՝ Ա.Հարությունյան

1. **ՌԱԿ-ՊԸԱՇՁԲ-2016/3 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը**

---

(Ա.Ռոստոմյան)

1.1 ՌԱԿ-ՊԸԱՇՁԲ-2016/3 ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են 2016 թվականի մայիսի 25-ին, ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում**

---

(Ա.Ռոստոմյան)

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

| Մասնակիցների անվանումները | Գրանցման վայրը |
|---|---|
| <<Ջի-Էս-Սի>> ՍՊԸ | ք.Երևան,Արցախի 23/6 |
| <<Ներթվորք Բիլդերս>> ՍՊԸ | ք.Երևան, Ավանեսով 5/15 |
| <<Էլկոմպ>> ՍՊԸ | ք. Երևան, Բաղրամյան 76/3 |
| <<Նարեկ և Վարդիկ>>ՍՊԸ | ք.Հրազդան, Կաքավաձորի 87 |
| <<Գրիման>> ՍՊԸ | ք.Երևան, Կոմիտասի պող 1, շ.66 |

Հայտերի բացման վերջնաժամկետից 15 րոպե հետո ներկայացվել է ևս երկու հայտ, որոնք, սակայն, հանձնաժողովի կողմից առանց բացվելու մերժվել են:

3. **Հայտերը փաստաթղթային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

---

(Ա.Ռոստոմյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Բացված յուրաքանչյուր փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

------------------------------------------------------------------------------------

(Ա.Ռուստոմյան)

4.1 <<Ջի-Էս-Սի>> ՍՊԸ-ի, <<Նարեկ և Վարդիկ>>ՍՊԸ-ի և <<Նեթվորք Բիլդերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում բացակայում էին ՌԱԿ-ՊԸԱԾՁԲ-2016/3 ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող **Քաղաքաշինության բնագավառում շինարարության՝ ներառյալ ներդիրը (կապի) լիցենզիաները:** <<Նեթվորք Բիլդերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում պատճենների մեջ բացակայում էր նաև գնային առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Հանձնաժողովը որոշեց՝**

------------------------------------------------------------------------------------

(Ա.Ռուստոմյան)

5.1 Կասեցնել հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել <<Ջի-Էս-Սի>> և <<Նարեկ և Վարդիկ>>ՍՊԸ-երին, որպեսզի վերջիններս 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնեն ՌԱԿ-ՊԸԱԾՁԲ-2016/3 ծածկագրով մրցույթի հրավերով պահանջվող լիցենզիան:

5.2 <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներին համաձայն՝ մերժել <<Նեթվորք Բիլդերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

------------------------------------------------------------------------------------

(Ա.Ռուստոմյան)

6.1«ՌԱԿ-ՊԸԱԾՁԲ-2016/3» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել մայիսի 26-ին, ժամը՝ 12:30-ին, <<Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի պող. 49/4, 5-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Նախագահ**

Ա.Ռուստոմյան ____________

**Անդամներ**

Ն.Թովմասյան ____________

Հ.Մնացականյան ____________

Ս.Սմբաթյան ____________

Ա.Հարությունյան ____________